ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«13» Դեկտեմբեր 2018թ. No 3228 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԴԵՂԵՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 25-ի N 347 որոշման 17-րդ կետի, Կառավարության 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 728-Լ որոշումը և հիմք ընդունելով «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի N 0101180818 առ 07.12.2018թ. գրությունը՝

11817 13 DEC 2018 ժամ 17.50

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Կատարել թվով 1 դեղի հավաստագրի վերաձևակերպումը՝ համաձայն հավելվածի:

2. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի ժ/պ Լ.Մելիքյանին՝

1) հնգօրյա ժամկետում ապահովել դեղերի վերաձևակերպված գրանցման հավաստագրերի ներկայացումը ՀՀ առողջապահության նախարարություն.

2) սահմանված ժամկետում ապահովել սույն հրամանի 1-ին կետում նշված դեղերի վերաձևակերպված գրանցման հավաստագրերի տրամադրումը հայտատուներին՝ որպես վերաձևակերպված հավաստագրի ուժի մեջ մտնելու ժամկետ նշել սույն հրամանի տրման օրը.

3) մինչև յուրաքանչյուր ամսվա 5-ը ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում) ներառելու նպատակով ՀՀ առողջապահության նախարարություն ներկայացնել նախորդ ամսվա ընթացքում պետական գրանցում ստացած դեղերի ցանկը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

13.12.2018

X

VERIFIED OCSP 13.12.2018 16:08:09 GMT+4

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՀ առողջապահության նախարարի

2018 թվականի դեկտեմբերի 13- ի

հրամանի N 3228 - Ա

## ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԴԵՂԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| Հ/Հ | Առևտրային անվանում | Միջազգային չպատենտավորված (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումներ | Դեղաձև | Դեղաչափը և թողարկման ձև (փաթեթավորում) | Արտադրող ֆիրման | Երկիր | Գրանցման հավաստագրի իրավատեր | Բացթողման կարգ | Եզրակացության համար |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Հերցեպտին | տրաստուզումաբ | դեղափոշի կաթիլաներարկման լուծույթի խտանյութի | 440մգ; (1) ապակե սրվակ և լուծիչ սրվակում 20մլ | դեղաձևն արտադրող, առաջնային փաթեթավորող՝ Գենենտեք Ինկ., 4625, ՆՎ Բրուկվուդ Պարկուեյ, Հիլսբորո, Օրեգոն, ՕՐ 97124-9332, ԱՄՆ, երկրորդային փաթեթավորող, բաց թողնման հսկող՝ Ֆ. Հոֆման-Լա Ռոշ ՍՊԸ, Վուրմիսվեգ, ՍՀ-4303, Կայզերաուգստ | Շվեյցարիա | Ֆ. Հոֆման-Լա Ռոշ ՍՊԸ, Գրենզախերշտրասե 124, ՍՀ-4070 Բազել Շվեյցարիա | Դ | 15865/1 |